

ՍԵԿՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ*

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող սույն ժողովածուի մեջ ամփոփված են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորի աշխատակիցների գիտական հոդվածները:

Հայտնի է, որ հայ և արևելյան շատ ժողովուրդների պատմությունն ու կուլտուրան սերտորեն կապված են իրար հետ: Այս կապերի ակունքները գալիս են դարերի խորքից և իրենց արտացոլումն են գտել դեռևս V դարի մեր մատենագիրներ՝ Ագաթանգեղոսի, Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Մովսես Խորենացու, VII դարի հուշարձան «Աշխարհացոյցի» հեղինակ Անանիա Շիրակացու և հետագա դարերի մյուս հայ պատմագիրների երկերում:

XIX դարի սկզբներից Ռուսաստանի արևելագիտության գլխավոր օջախներից մեկն էր Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը, որը արևելագետների մի ամբողջ սերունդ է դաստիարակել: Լազարյան ճեմարանի անվան հետ են կապված հայ անվանի արևելագետներ Ստեփանոս Նազարյանի, Մկրտիչ Էմինի, Քերովբե Պատկանյանի, Գրիգոր Խալաթյանի և շատ ուրիշների անունները, որոնք մյուս հայ գիտնականների հետ միասին արժեքավոր մենագրություններ են ստեղծել արևելյան

* Առաջին հատորի խմբագրական խորհրդի «Սեկտորի կողմից» վերտառությամբ հայերեն և ռուսերեն տեքստերը ներկայացնում ենք առանց փոփոխությունների և խմբագրման: Տե՛ս Արևելագիտական ժողովածու, Հ. I, Երևան 1960, էջ 5-8:

ժողովուրդների պատմության, լեզվի և գրականության վերաբերյալ:

Արևելագիտության հիմնական ճյուղերից մեկի՝ քրդագիտության բնագավառում ևս մեծ ներդրում ունեն հայ հեղինակները: Քրդագիտության զարգացմանը նպաստել են հայ մեծանուն լուսավորիչ Խաչատուր Աբովյանը, իսկ հետագայում Ս. Եղիազարյանը, Ս. Հայկունին, Ա. Խաչատրյանը և այլ հայ քրդագետներ:

Սովետական իշխանության տարիներին Արևելքի ժողովուրդների հին և միջին դարերի պատմության ու կուլտուրայի, Հայաստանի և հարևան երկրների պատմական կապերի շուրջ հայ գիտնականները հրատարակել են մի շարք կարևոր ուսումնասիրություններ: Հիշատակության արժանի են ակադեմիկոսներ Հ. Մանանդյանի, Հր. Աճառյանի, Գր. Ղափանցյանի, Հ. Օրբելու, պրոֆ. Ռ. Աբրահամյանի և նրանց աշակերտների աշխատությունները:

Հայկական ՍՍՌ-ում զգալի գիտահետազոտական աշխատանքներ են ծավալվել նաև ուրարտագիտության, խեթագիտության և ասորագիտության բնագավառներում, հրապարակվել են Մատենադարանի եզակի արժեք ներկայացնող արևելյան առանձին ձեռագրեր, կազմվել են բառարաններ:

Վերջին տարիներս ռեսպուբլիկայում աճել են արևելագիտական նոր, երիտասարդ մասնագետներ, ստեղծվել են արևելագիտության նոր կենտրոններ:

1958 թ. հոկտեմբերից Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում կազմակերպված Արևելագիտության սեկտորը իր ջանքերը կենտրոնացնում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նոր և նորագույն շրջանի պատմության,

տնտեսության և կուլտուրայի առանձին ակտուալ խնդիրների գիտական մշակման վրա:

Սեկտորի գիտահետազոտական աշխատանքներում պատշաճ ուշադրություն է դարձվելու Սովետական Միության խաղաղասիրական արտաքին քաղաքականության, Արևելքի երկրների ազգային ազատագրական շարժումների և քաղաքական ու տնտեսական անկախության համար ժողովուրդների մղած պայքարի, ինչպես նաև ժամանակակից էտապում իմպերիալիզմի գաղութային քաղաքականության հարցերի լուսաբանմանը:

Սեկտորի գիտական պլաններում որոշակի տեղ են գրավելու քրդագիտության պրոբլեմները, Արևելքի երկրներում հայկական գաղութների պատմությունը, արևելյան տարբեր լեզուների բառարաններ կազմելը:

«Արևելագիտական ժողովածու»-ն պարունակում է հետազոտվող պրոբլեմների առանձին հարցերի վերաբերյալ հոդվածներ, որոնց հեղինակները հավակնություն չունեն քննվող հարցերի լուսաբանումը համարել սպառնիչ:

Սեկտորը շնորհակալությամբ կընդունի իր առաջին ժողովածուի մասին եղած քննադատական դիտողություններն ու կարծիքները:

ОТ СЕКТОРА

В предлагаемом вниманию читателей сборнике помещены научные статьи сотрудников Сектора востоковедения Академии наук Армянской ССР.

Широко известны исторические и культурные связи армян с народами Востока. Уходящие вглубь веков корни этих связей отражены уже в трудах историографов V века Агатангеоса, Езника Кохбаци, Егише, Мовсеса Хоренаци, автора памятника VII века «Ашхарацуйц» («География») Анания Ширакаци и других армянских историографов прошлого.

С начала XIX века один из главных очагов востоковедной науки России - Лазаревский институт восточных языков в Москве подготовил целую плеяду востоковедов. С этим Институтом связаны имена известных востоковедов-армян: Степаноса Назаряна, Мкртича Эмина, Керовбе Патканяна, Григора Халатяна, которые вместе с другими армянскими учеными создали ряд монографий по истории, языку и литературе народов Востока.

Развитию курдоведения - составной части востоковедной науки - способствовали известный армянский просветитель Хачатур Абовян, а позднее исследования С. Егиазарова, С. Айкуни, А. Хачатряна и других армянских курдологов.

В годы советской власти армянскими учеными были изданы ценные исследования по древней и средневековой истории и культуре народов Востока, а также по историческим связям Армении с сопредельными странами. Значительными из них являются труды академиков А. Манандяна, Г. Ачаряна, Г. Капанцяна, И. Орбели, проф. Р. Абрамяна и некоторых их учеников.

В Армянской ССР проделана значительная научно-исследовательская работа также в области урартологии, хеттологии и ассириологии; опубликованы уникальные восточные рукописи Матенадарана, изданы словари.

За последнее время в республике выросли новые кадры востоковедов, созданы центры востоковедной науки. Организованный в октябре 1958 г. Сектор востоковедения Академии наук Армянской ССР сосредоточит свои усилия на научной разработке отдельных актуальных проблем новой и новейшей истории, экономики и культуры стран Ближнего и Среднего Востока. В научно-исследовательской работе Сектора должное внимание будет уделено миролюбивой внешней политике Советского Союза, вопросам национально-освободительного движения и борьбы народов за политическую и экономическую независимость в странах Востока, а также анализу колониальной политики империализма на современном этапе.

В научных планах Сектора определенное место займет исследование проблем курдоведения, истории армянского колоний в странах Востока, составление словарей восточных языков, публикация источников.

Для выполнения намеченных задач Сектор объединит усилия востоковедов республики.

В «Востоковедческом сборнике» публикуются научные статьи, охватывающие некоторые вопросы исследуемых проблем. Авторы статей не претендуют на всестороннее освещение этих вопросов.

Сектор с благодарностью примет критические замечания и отзывы о своем первом сборнике.